ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ը ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՆ Է

ԿՅԱՆՔ ՓՐԿՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Օրը նվիրված է քաղցկեղի կանխարգելման արդյունավետության, սքրինինգային հետազոտությունների կարևորության, հիվանդության վաղ փուլում հայտնաբերման և բուժման վերաբերյալ իրազեկման բարձրացմանը:

Կանանց և տղամարդկանց մոտ քաղցկեղի առավել տարածված ձևերը



- շնչափող
- բրոնխներ
- թոք
- ստամոքս
- լյարդ
- լեղուղիներ
- շագանակագեղձ

- շնչափող
- բրոնխներ
- թոք
- կրծքագեղձ
- ստամոքս
- հաստ աղի

Քաղցկեղը կանխարգելելու 10 խորհուրդ

- Չծխել
- Խուսափել ավելորդ քաշից, ճարպակալումից
- Զբաղվել ֆիզիկական ակտիվությամբ
- Սննդակարգը հարստացնել հատիկեղենով, բանջարեղենով, մրգերով
- Խուսափել fast food-ից
- Սահմանափակել շաքար պարունակող ըմպելիքի ընդունումը, ալկոհոլի օգտագործումը
- Սահմանափակել կարմիր (տավարի, խոզի և գառան) և վերամշակված մսի օգտագործումը
- Խուսափել սննդային հավելումների ընդունումից
- Կրծքով կերակրել
- Քաղցկեղ ախտորոշվելուց հետո՝ հետևել բժշկի խորհուրդներին

ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշման մեջ փոփոխություններ են կատարվել:

Նոր փոփոխությունների համաձայն, ՀՀ-ում ամբողջական պատվաստված անձանց ինքնամեկուսացման ժամկետը **14 օրից** նվազեցվում է **7 օրացուցային օրվա**, իսկ չպատվաստվածների համար՝ **10 օրացուցային օրվա**: ՊՇՌ հետապոտության նմուշառման օրվանից հաշված **7-րդ օրը** չպատվաստված անձինք իրենց նախաձեռնությամբ կարող են անցնել ՊՇՌ հետապոտություն և բացասական արդյունքի դեպքում դուրս գալ ինքնամեկուսացումից:

● Օդանավակայանում թույլատրվում է դիմավորողների մուտքը ժամանման սրահ՝ խստորեն պահպանելով սանիտարահակահամաճարակային կանոնները:

● Սանիտարահակահամաճարակային անվտանգությունն ապահովելու նպատակով, սահմանային անցման կետերում և օդանավակայանների փակ տարածքներում ուղևորահոսքը կառավարելու կամ մարդկային (այդ թվում՝ դիմավորողների) կուտակումներից խուսափելու համար, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ ոստիկանությունը և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը կարող են կիրառել անձանց տեղաշարժի սահմանափակման կամ կանոնակարգման միջոցառումներ:

Նոր կարգավորումներն ուժի մեջ են մտնում փետրվարի 1-ից և տարածվում են նաև որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ինքնամեկուսացման մեջ գտնվող անձանց վրա:

ԴԱՍԸՆԹԱՑ

«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ»

«Համայնքային առողջապահության արդյունքների ընդլայնում» (ECHO) ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՆ Թոքաբանության ազգային կենտրոնն իրականացրել է հերթական՝ այս տարվա առաջին առցանց դասընթացը:

Դասընթացին մասնակցել են հակատուբերկուլոզային արտահիվանդանոցային ծառայություններ իրականացնող ԱԱՊ օղակի ավելի քան 50 հաստատությունների մասնագետներ, Առողջապահության նախարարության և Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչներ:

«ECHO» նախագիծը երկրի բոլոր տուբերկուլոզային ծառայությունների առցանց հաղորդակցման, խնդիրների համատեղ լուծման և դեպքերի վրա հիմնված ուսուցման հարթակ է՝ հիմնված նորարարական տեսակոնֆերանսի տեխնոլոգիայի վրա: Այն ուղղված է տուբերկուլոզի հայտնաբերման, կանխարգելման և բուժման ծառայությունների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև մասնագիտական ներուժի և շարունակական բժշկական կրթության համակարգի զարգացմանը:

Ընդհանուր առմամբ, ծրագիրը կբարելավի հակատուբերկուլոզային ծառայությունների որակն ու հասանելիությունը, հատկապես հեռավոր բնակավայրերում, երբ ճամփորդությունն ու կանոնավոր անհատական ուսուցումը ծախսատար և ժամանակատար են: Հարթակի կարևորությունն առավել ընդգծվել է COVID-19-ի հետ կապված սահմանափակումների և այդ իրավիճակում արտահիվանդանոցային բժշկական ծառայությունների, այդ թվում՝ տուբերկուլոզի ախտորոշման և բուժման անխափան իրականացման մարտահրավերների պատկերի վրա:

Առողջապահության նախարարության կողմից իրականացվող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «ECHO» ծրագիրը մեր երկրում ներդրվել է Նյու Մեքսիկոյի համալսարանի (ԱՄՆ) և ՀՀ ԱՆ-ի միջև ստորագրված համաձայնագրի հիման վրա՝ համալսարանի փորձագետների տեխնիկական աջակցությամբ: Ծրագրի իրագործմանն աջակցություն է ցուցաբերել նաև Ասիական զարգացման բանկը՝ շուրջ 40 առողջապահական հաստատությունների տրամադրելով հեռաբժշկության սարքավորումներ :

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

ՄԻԱՍԻՆ ՀԱՂԹԵՆՔ COVID-19

ՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հունվարի 30-ի դրությամբ կատարվել է

- **1 883 413** պատվաստում
- առաջին դեղաչափ՝ **1 032 249**
- երկրորդ դեղաչափ՝ **842 213**
- բուստեր՝ **8 951**

2022 թվականի մարտի 15-ից արգելվում է ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումը հանրային սննդի բոլոր օբյեկտներում, այդ թվում, բացօթյա (ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման ու իրացման այլ օբյեկտներ):

COVID-19 | ՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ՇԱՐԺԱԿԱՆ ԿԵՏԵՐ

ԱՄԵՆ ՕՐ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ

Հյուսիսային պողոտա («Տաշիր Սթրիթ» առևտրի կենտրոն)	12:00-16:30
«Ռոսիա մոլ»	12:00-20:00
«Ռիո մոլ»	14:00-17:00

! ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՑ ԳՈՐԾՈՒՄ Է ՆՈՐ ՇԱՐԺԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԿԵՏ

12:00-16:30

Երևան
Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 2, 3-րդ տարածք

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

COVID-19

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

389 957
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔ

2 778 485
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

350 636
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

8 086
ՄԱՀԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

Փետրվարի 6-ի դրությամբ

6 640 ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

2 467 ՆՈՐ ԴԵՊՔ

2 280 ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

29 681 ԲՈՒԺՎՈՂ ՊԱՑԻԵՆՏ

5 ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ

ՕՊԵՐԱՏԻՎ ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ 060 83 83 00 -24/7

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.:
Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:
Մեր հասցեն է՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Լուսինե Հովհաննիսյան**
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան**, **Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**